ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 10-38
17.11.2010թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
պարոն Գ.Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն նախարար,

2010 թվականի Նոյեմբերի 15-ին Դիտորդական խմբի անդամներ՝ Լաուրա Գասպարյանը և Լուսինե Հարությունյանը այցելել են ՀՀ ԱՆ Կոշ ՔԿՀ՝ ստուգելու լրատվական միջոցներով դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ բռնությունների վերաբերյալ հայտարարությունների մեջ նշված հանգամանքները:

Այցելության ժամանակ պարզվել է, որ դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի ձախ բազուկի դրսային միջին 1/3 հատվածում նկատելի է կապտուկ /կապտականաչադեղնավուն երանգով/ 3-4սմ չափերով, նախաբազկի դրսային ստորին 1/3-ում հայտնաբերվել է թույլ արտահայտված այտուց: Դատապարտյալի պնդմամբ նկարագրված տեղում, մազածածկույթի տակ, նույնպես եղել է կապտուկ, բայց խցի աղոտ լույսի ներքո խմբի անդամները դժվարացել են արձանագրել այն:

Դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի պնդմամբ կապտուկներ են եղել նաև ձախ սրունքի կողմնային-դրսայի շրջանում, ինչպես նաև մեջքի ձախ կողմնային շրջանում, որոնք խմբի անդամների կողմից չեն հայտնաբերել:

Դատապարտյալի պնդմամբ կապտուկներն ի հայտ են եկել հայտնի դեպքից ժամեր անց: Ըստ դատապարտյալի, իրեն հասցված հարվածները եղել են վերմակի վրայից /դատապարտյալը ծածկված է եղել վերմակով/:

Դատապարտյալը եղել է աջ կողմի վրա պառկած, որի պատճառով հարվածներն ստացել է ձախ կողմից: Խմբի անդամների այցելության պահին վերմակը տեղափոխված է եղել հետաքննիչի մոտ, որի մասին կազմվել է համապատասխան արձանագրություն:

Սույնով, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Դիտորդական խմբի անդամների կողմից արձանագրված մարմնական վնասվածքների փաստերին և մեր տարակուսանքն ենք հայտնում, մամուլում հրապարակված այն տեղեկությունների վերաբերյալ ըստ որոնց դատաբժշկական փորձաքննության արդյունքում Նիկոլ Փաշինյանի մարմնի վրա որևէ վնասվածք չէր հայտնաբերվել:

Ելնելով վերը շարադրվածից դիմում ենք.

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11 փ, 43 շ. Aygestan 11th str., 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: (+37410) 55 96 34 e-mail: pmg.armenia@hra.am

- տեղի ունեցած դեպքի առընչությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու հարցով,
- ինչ միջոցներ են ձեռնարկվում դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի և մյուս ազատազրկված անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ:

Խնդրում եմ արդյունքների մասին գործող կարգի համաձայն հայտնել դիտորդական խմբին:

Կանխավ շնորհակալ եմ,

ՀՀ ԱՆ ՔԿՀ Հասարակական վերահսկողություն
Իրականացնող Հասարակական Դիտորդների
Խմբի նախագահ՝ Ա.Սաքունց

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11 փ, 43 շ. Aygestan 11th str., 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: (+37410) 55 96 34 e-mail: pmg.armenia@hra.am